

ՄՓՅՈՒՌԵԱՆՅԱՆ ԿՅԱՆԵՐ ԺՈՅՆԻ ԶԱՐԿԵՅԻՆԻՔԻ ԱՐՄՅԱՆ

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ ՄՓՈՒԹՔՈՒՄ

(1967 թ. հուլիս — դեկտեմբեր)

ԲՈՒՂԱՐԱՆ

Բուլղարահայ ածրեանս կազմակերպության Սոֆիա քաղաքի վարչության և բուլղար ու սովետական բարեկամության քաղաքական կոմիտեի նախաձեռնությամբ դեկտեմբերի 3-ին ժողովրդական բանակի տանը մեծ շուքով տոնվեց Հայաստանում սովետական իշխանության հաստատման 47-րդ տարեդարձը։ Սովետական Հայաստանի տարեդարձը տոնվեց նաև Պլովդիվում, Ռուսեում, Սիլիստրայում, Վառնայում, Շումենում, Յամբուլում, Բազարջիկում։

«Երեան», 15 դեկտեմբերի

Սոֆիայի բուլղարա-սովետական բարեկամության տանը տեղի ունեցավ Արամ Խաչատրյանի ստեղծագործությանը նվիրված երեկո։

Մեծատաղանդ կոմպոզիտորի ստեղծագործության մասին հետաքրքիր զեկուցում կարդաց Սոֆիայի ռադիոյի երաժշտական հաղորդումների ղեկավար խմբագրի տեղակալ Ա. Անդեյովը։

Երեկոյի վերջում ցուցադրվեց «Արամ Խաչատրյան» վավերագրական կինոնկարը։

«Գրական թերթ», 15 դեկտեմբերի

ՌՈՒՄԻՆԻԱ

Բուխարեստում երեկո է կազմակերպվել նվիրված Հովհաննես Ալվադովսկու ծննդյան 150-ամյակին։

Բուխարեստի համալսարանի դասախոս և արվեստի թնադատ Մարիա Դումիտրեսկուն զեկուցել է Ալվադովսկու մասին։

Մոզական լապտերով ցուցադրվել են Ալվադովսկու նկարների դուստրվոր վերարտադրությունները։

«Ջահակիր», 14 սեպտեմբերի

Բուխարեստում լույս է տեսել «Տրանսիլվանիայի հայկական հեթաթները» ռումիներեն, Հատորը կազմել է ռումին գրականագետ Յոն Ապոստոլ Պոպեսկուն։ Նա այցելել է Տրանսիլվանիայում ապրող հայ ժերուհներին և գրի առել նրանց պատմած հեթաթները, որոնք առա-

ջին անգամ հրատարակվել են այս հատորում։

Յոն Պոպեսկուն այս գրքում տվել է նաև ակնարկ Տրանսիլվանիայի հայերի կյանքի ու կենցաղի մասին։

«Հայրենիքի ձայն», 29 նոյեմբերի

ԵԹՈՎՊԻԱ

Ադիս-Աբեբայի հայկական ազգային վարժարանը, որ հիմնվել է 1917 թ. և սկզբում ունեցել է «Արարատյան վարժարան» անունը, այժմ ունի 11 ուսուցիչ և 150 աշակերտ։

Եթովպահայ զաղութը և վարժարանը սերտ կապ են պահպանում հայրենիքի հետ։

«Հայրենիքի ձայն», 30 օգոստոսի

ՍԻՐԻԱ

Հալեպում լույս է ընծայվել Շիրազի «Սիամանթո» և Խաչեղարենի արարներն թարգմանությունները։ Թարգմանության և առաջարանի հեղինակն է Նիզար Խալիլը։

«Ջահակիր», 3 օգոստոսի

ԱՄՀ

Կահիրեի կոկայան սրահում հաջողությամբ ներկայացվել է Հակոբ Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկանները», որը թատերգության է վերադրվել ռեժիսորի ու բաղմավաստակ դերասան Սեդի Գոշունյանը։

«Հայրենիքի ձայն», 26 հուլիսի

Իզիպտահայ նկարիչ Բյուղանդ Կոնստանյանը Հայկական ընթերցասրահում դասախոսել է հայ նկարչության մասին։ Սկսելով հայ հին մանրանկարչությունից, նա կանգ է առել Սարգիս Պիծակի և Թորոս Ռոսլինի արվեստի առանձնահատկությունների վրա։ Արվեստագետը ներկայացրել է ֆրանսահայ նկարիչներ Գառզուին, Էդգար Շահինին, Իտալահայ նկարիչներ Շինթյանին, Ժիրայր Օրադյանին և մեծ վարպետին՝ Մարտիրոս Սարյանին։ Վերջում ցուցադրվել են «Վարդգես Սուրենյանց», «Շառլ Ազնավուրը Հայաստանում», «Տիգրան Պետրոսյան» և «Արփա—Սևան շինությունը» կարճամետրաժ կինոնկարները։

«Հայրենիքի ձայն», 26 հուլիսի

• • •

Կահիրեում, Թեքեյան Միության սրահում հոկտեմբերի 25-ին հանդիսավորությամբ տոնվել է Եղիշե Չարենցի ծննդյան 70-ամյակը:

Ձեկուցողը՝ ամերիկահայ արձակագիր Անդրանիկ Անդրեասյանը, ներկաներին ծանոթացրել է Չարենցի արվեստին: Տրվել է ճոխ համերգ: «Աշխարհ», 25 նոյեմբերի

• • •

Կահիրեում, Հայկական ընթերցասրահում հանդիսավորությամբ տոնվել է Սովետական Հայաստանի 47-րդ տարեդարձը:

«Արարատ», 6 դեկտեմբերի

ԼԻՐԱՆԱՆ

Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» էրա ֆրանսերեն է թարգմանել Բեյրութի Գրիգոր Լուսավորիչ ճեմարանի տնօրեն Սահակ Քեչիշյանը, որի 14 տարիների տնայնացի աշխատանքի արդյունքն է այս (լույս է ընծայվել «Սուրս Կրեմլին» հրատարակչության կողմից): Գրքին լայնորեն արձագանքել է համաշխարհային պարբերական մամուլը, հաղորդումներ ազգային և արտասահմանյան թերթերում: Գրքի արձագանքներն են տպագրվել ֆրանսիական, անգլիական, բելգիական, հունգարական և արաբական հանդեսներում ու լրագրերում:

Փարիզի արևելյան կենդանի լեզուների դպրոցի հայկական ամբիոնի վարիչ պրոֆ. Ֆրեդերիկ Ֆեյդի կարծիքով «այդ սքանչելի թարգմանությամբ «Մատյան ողբերգության» անցնում է միջազգային գրականության առաջին շարքերը և գրավում իր հատուկ տեղը:

Սահակ Քեչիշյանը այժմ ֆրանսերեն է թարգմանում հայ մատենագրության մի ուրիշ խոշոր ներկայացուցիչ՝ Ներսես Շնորհալու ստեղծագործությունները:

«Սևան», 8 նոյեմբերի

• • •

Նոյեմբերի 4-ին Թեքեյան մշակութային միությունը մեծ շուքով նշեց Եղիշե Չարենցի ծննդյան 70-ամյակը: Երեկոն բացեց Վ. Թեքեյան վարժարանի տնօրեն, Թեքեյան մշակութային միության վարչության ատենապետ Երվանդ Պապայանը, այնուհետև հանդես եկան «Նաիրի» շաբաթաթերթի խմբագիր Ա. Մառուկյանը, Վահե Վահյանը, լիբանանցի բանաստեղծ Ռայիտ Աքլը և Բեյրութում որպես հյուր դանվող Գարեգին Սևունցը:

Գեղարվեստական բաժնում «Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծությունը արտասանել են Ազնիվ Թորոցյանը՝ անգլերեն, Անդրանիկ Զիլինկիրյանը՝ արաբերեն և Սարգիս Մի-

նասյանը՝ հայերեն, այնուհետև ելույթ են ունեցել ֆրանսահայ երգչուհիներ և ասմունքի վարպետներ:

«Նոր օր», 17 նոյեմբերի

• • •

Նոյեմբերի 2-ին ֆրանսահայ հայտնի երգչուհի Ռոզի Արմենը մեծ հաջողությամբ համերգ է տվել Բեյրութում:

«Աշխարհ», 25 նոյեմբերի

• • •

Դեկտեմբերի 7-ին Գալուստ Գյուլբենկյան հանդիսասրահում հայ և օտար մտավորականությունը ներկայացնող բազմության ներկայությամբ տեղի ունեցավ հորելյանական նիստ՝ նվիրված «Երիտասարդ հայուհի» ամսագրի հրատարակման 15-ամյակին և տիկին Սիրտն Ազատի գրական գործունեության 40-ամյակին:

Հանգամանալից զեկուցումներով հանդես եկան Ազատուհի Սիմոնյանը, Անդրանիկ Մառուկյանը, Այտա Խորիսը, Վերջում հորելյանը իր շնորհակալական խոսքն է ասել:

«Արարատ», 12 դեկտեմբերի

ԻՐԱՎ

Կերկուկի հայկական գաղութը բաղկացած է 300 ընտանիքից: Գաղութը ունի ազգային վարժարան, որը ղեկավարվում է թաղական խորհրդի կողմից, և եկեղեցի:

Բացի Կերկուկից քրդական էրպիլ գյուղաքաղաքում կա 17 ընտանիքից բաղկացած հայ գաղութ: Այստեղ հայերը քրդերեն են խոսում, սակայն կապված են հայ եկեղեցու հետ: Շրջանի քրդական այլ գյուղերում բնակվում են հառ ու կենտ քրդախոս հայեր:

«Երիտասարդ Հայաստան», 8 սեպտեմբերի

ՔՆՆԻԱ

Նայրոբիում բնակվում են ութից տաս հայ ընտանիք: Մոտ 80 անգամից բաղկացած այս գաղութը չունի իր դպրոցը:

«Աշխարհ», 21 հոկտեմբերի

ԻՐԱՆ

Հ. Բ. Ը. միության և Գյուլբենկյան հիմնարկության օժանդակությամբ Հ. Բ. Ը. միության Իրանի մասնաճյուղը Թեհրանում բաց է արել «Նվարդ Գյուլբենկյան» դպրոցը: Նոյեմբերի 5-ին տեղի է ունեցել դպրոցի բացումը, որին ներկա են գտնվել Գյուլբենկյան հաստատության ներկայացուցիչ Կորյուն Քեչիշյանը և Հ. Բ. Ը. միության կենտրոնական վարչության ներկայացուցիչ Մարտիրոս Իսկենտեբյանը:

«Աշխարհ», 3 հունվարի 1963

Իրանի բնակչությունը կազմում է 25 միլիոն 700 հազար, որից 190.400-ը՝ հայ:

«Պայքար», 11 օգոստոսի

• • •

Իրանահայ գաղութում մի խումբ հայ մտավորականներ վերջին տարիներս եռանդուն գործունեություն են ծավալել թարգմանության բրնազավառում, Դասական և ժամանակակից հայ գրականության լավագույն երկերը թարգմանաբար ներկայացվել են պարսիկ ընթերցողներին:

Սպահանում հրատարակվող «Ջոնգ» գրական ամսագիրը իր 1966 թ. համարներից մեկում լույս է ընծայել Սիամանթոյի բանաստեղծություններից մի քանիսը Հրանտ Ղուկասյանի թարգմանությամբ: «Արմաղան» պատմա-բանասիրական հանդեսում տպագրվել է «Աբու Լալա-Մահարի» պոեմի թարգմանությունից երկու սուրահ: Թարգմանությունը, հանդեսի խմբագիր, գրականագետ Մահմուտ Վահիդ Դասթգարտի արտահայտությամբ, կատարված է «սահուն և գեղեցիկ պարսկերենով»:

«Աշխարհ», 21 սեպտեմբերի

ԹՈՒՐԹԻԱ

Ստամբուլում մահացել է Բագրատ Թեանյանը: Նա երկար տարիներ Պոլսում հրատարակել է «Երջանիկ» տարեգիրքը և «Պարտեզ» մանկական ամսաթերթը, ինչպես նաև պոլսահայ կյանքին նվիրված մի քանի վեպեր:

«Աշխարհ», 11 հոկտեմբերի

• • •

Հայ տպագրությունը առաջին անգամ մուտք է գործել Ստամբուլ 1567 թ. Արգար Դպիրի միջոցով: 1967 թ. լրացավ այդ իրադարձության 400 տարին: Ստամբուլահայությունը հանդիսավորությամբ նշել է հայ մշակույթի պատմության մեջ կարևոր նշանակություն ունեցող այս անցքը:

«Աշխարհ», 18 հոկտեմբերի

ԱՎՍՏՐԻԱ

Մարդկանց իրավունքների պաշտպանության համաշխարհային կոմիտեի նախաձեռնությամբ Վիեննայում տեղի է ունեցել միջազգային խորհրդագծողով, որին մասնակցել է նաև Հայաստանի Առաքելական եկեղեցու ներկայացուցիչ Գեր. Մեսրոպ Մ. վրդ. Գրիգորյանը: Գերմանիայի լեզվով նա զեկուցել է հայկական հարցի մասին և աշխարհի տարրեր երկրների ներկայացուցիչներին ծանոթացրել հայ ժողովրդի դարավոր իղձերին: Վիեննայի մամուլը անդրադարձել է վրդ. Գրիգորյանի այդ զեկուցմանը:

«Արարատ», 2 հոկտեմբերի

ՖՐԱՆՍԻԱ

Ֆրանսիական ակադեմիայի 1967 թ. բանաստեղծությունների համար սահմանված մրցանակը շնորհված է ֆրանսիական ժամանակակից բանաստեղծության շնորհալի ներկայացուցիչ Ռուրեն Մելիքին՝ 1954 թ. հետո նրա գրած բանաստեղծությունների համար:

«Աշխարհ», 1 հուլիսի

• • •

Օուլեանում բացվել է աշխարհահռչակ նկարիչ Գառուդի նկարների ցուցահանդեսը: Այստեղ ներկայացվել են նկարչի 53 կտավները, որ ըստեղծված են 1932-ից մինչև 1967 թ. ընկած ժամանակաշրջանում:

«Աշխարհ», 5 սեպտեմբերի

• • •

Փարիզում լույս տեսնող «Ֆրանսիա—ՍՍՀՄ» ամսագիրը այս տարվա ապրիլ ամսվա համարում տպագրել է էմմանուել Ռորլիի հոդվածը, որտեղ բազմակողմանիորեն ներկայացված է Սովետական Հայաստանի տնտեսական և մշակութային վիթխարի վերելքը: Մատենադարանի մասին խոսելիս Ռորլեն ասում է. «Այս գանձարանը իր նմանը չունի ամբողջ աշխարհում: Արժե Հայաստան այցելել տեսնելու համար թեկուզ միայն այս թանգարան-գրադարանը, ուր պահպանվում և գիտական ուսումնասիրության նյութ են դառնում հրաշքով փրկված այդ ձեռագրերը... Հայերը մեծ սիրտ ունեն, խելացի մտածող, ճաշակի տեր, երգիծանքի զգացումով ու պայծառ երևակայությամբ օժտված ժողովուրդ են: Նրանցից յուրաքանչյուրի մեջ կա մի բանաստեղծ: Այո, հարավային ֆրանսիացիները Հայաստանում իրեն զգում է ինչպես տանը»:

«Արև», 8 սեպտեմբերի

• • •

Փարիզի ռադիոկայանը հաղորդում է կազմակերպել նվիրված հայկական երաժշտությանը, որը տևել է մեկ և կես ժամ:

Ականավոր մտավորական էդուարդ Հոֆմանը հանգամանորեն խոսել է հայ երաժշտության մասին, որից հետո հաղորդվել են Կոմիտասի, Ա. Բարաջանյանի, Ա. Հարությունյանի, է. Միրզոյանի ստեղծագործություններից:

«Արարատ», 3 նոյեմբերի

• • •

Փարիզի Ազգային տան մշակութային միության «Հաս» գրադարանի սրահում նոյեմբերի 12-ին կազմակերպվել է հանդիսավոր ցերեկույթ՝ նվիրված Նդիշե Զարենցի ծննդյան 70-ամյակին:

Ֆրանսիական Մշակութային միության կողմից Գեղամ Աճեմյանը բովանդակալից զեկուցում է կարդացել՝ նվիրված հայ մշակույթին և Եղիշե Չարենցին, Բանաստեղծուհի Մառի Աթմաճյանը ներկայացրել է մեր դասական գրողներին ու Եղիշե Չարենցին, Զ. Խանզադյանը իր ելույթը նվիրել է հայ մտավորականներին և գիտնականներին, Ցերեկույթին նախագահել է Հ. Վեգիրյանը, Վերջում տրվել է համերգ:

«Աշխարհ», 22 նոյեմբերի

• • •

Փարիզում մահացել է հայ անվանի կոմպոզիտոր և դաշնակահարուհի Գոհարիկ Ղազարոսյանը: Նրա կատարողական արվեստի և ստեղծագործությունների մասին մեծ դրվատանքով են արտահայտվել շատ արվեստաբաններ ու քննադատներ:

«Արարատ», 16, 25 նոյեմբերի

• • •

Սովետական Հայաստանի 47-րդ տարեդարձը հանդիսավորությամբ տոնվել է Փարիզի Պլեյելի սրահում, դեկտեմբերի 3-ին, նախագահում էր Պիեռ Կոտր: Ելույթ ունեցավ Ֆրանսիական Մշակութային միության ներկայացուցիչ, «Աշխարհ» խմբագիր Ա. Ալեքսանյանը: Այնուհետև ելույթ ունեցավ ԺԱԾ-ի ներկայացուցիչ Ա. Պերպերյանը:

Սովետական Միության Փարիզի դեսպան Վալերիան Զորինը իր ելույթը նվիրեց Հոկտեմբերյան հեղափոխությանը և Հայաստանի վերածննդին: Այնուհետև «անդրադարձավ հայ և ֆրանսիացի ժողովուրդներու դարավոր բարեկամության, Ֆրանսիայի և Սովետական Միության փոխհարաբերություններու մասին»: Եղել է ճոխ համերգ, ապա հյուրասիրություն:

Դեկտեմբերի 4-ին Սովետական Հայաստանի 47-րդ տարեդարձը նշվել է Վալանսում, դեկտեմբերի 17-ին՝ Մարսելում:

«Աշխարհ», 20, 30 դեկտեմբերի

• • •

Փարիզում դեկտեմբերի 10-ին, Սալ Կալոյի սրահում, նկարիչ Գառուի նախադահույթամբ տեղի է ունեցել հորելյանական հանդես՝ նվիրված ֆրանսահայ դերասան Արտաշես Գմբեթյանի թատերական գործունեության հիսնամյակին:

«Արարատ», 21 դեկտեմբերի

• • •

Մահացել է ֆրանսահայ զրոգ, «Զվարթնոց» պարբերականի երկարամյա խմբագիր-հրատարակիչ Հրանտ Բալույանը:

«Աշխարհ», 23 դեկտեմբերի

ԱՆԴՆԻՍ

Հոնդոնում հրատարակվող «Մորենից Ստար» օրաթերթի այս տարվա հուլիսի 11-ի համարում տպագրված է Զոն Մոսի ակնարկը Սովետական Հայաստանի մասին: «Հայաստանը այսօր հին և նորի սթանշելի խառնուրդ է, նրա նրբաճաշակ այրուրներ կազմվել է 1600 տարի առաջ, VII դարում հայ աստղագետ Շիրակացին ասել է, որ երկիրը ոչ հարթ է և ոչ էլ քառակուսի: Այն ձվաձև է»:

Այնուհետև հեղինակը խոսում է գիտությունների ակադեմիայի, Մատենադարանի, Հայաստանի հուշարձանների մասին:

«Արև», 8 սեպտեմբերի

Հոնդոնի հայ համայնքը ունի 5000 մարդ: Այստեղ կուլտուրական աշխատանք են ծավալել «Հայ տան» մշակութային հանձնախումբը և հայ երիտասարդաց միությունը: Անցյալ մի քանի ամիսների ընթացքում մշակութային հանձնախումբը կազմակերպել է, օրինակ, ճարտարապետ Կարպիս Արմենի դասախոսությունը «Քաղաքաշինությունը Հայաստանի մեջ» թեմայով: Հայ ժողովրդական երաժշտությանը նվիրված երեկոյին մշակութային հանձնախմբի անդամ Ասատուր Կյուզելյանը զեկուցում է կարդացել հայ ժողովրդական երաժշտության մասին: «Հայ տան» մեջ կազմակերպվել է ընդունելություն ի պատիվ Երևանի պետական համալսարանի արտասահմանյան ուսանողների նախապատրաստական ֆակուլտետի դեկան Գ. Հարությունյանի և Երևանի գլխավոր ճարտարապետ է. Պապյանի:

«Հայ տան» մշակութային հանձնախումբը որոշել է դասախոսությունների շարք նվիրել հայ գրականությանը, որի առաջին դասախոսությունը՝ «Համայնապատկեր հայ գրականության», կարդացել է Ասատուր Կյուզելյանը:

«Ջահակիր», 23 նոյեմբերի

ԻՏԱԼԻԱ

Միլանի «Մարինա» ցուցահանդեսում բացվել է լիրանանահայ տաղանդավոր նկարիչ Հևոն Ժամկոչյանի ստեղծագործությունների ցուցահանդեսը: Իտալիայում նա ունեցել է բազմաթիվ ցուցահանդեսներ և արժանացել է քննադատների բարձր գնահատանքին: Մի քանի ամիս առաջ Հևոն Ժամկոչյանը արժանացել է Միլանի «Պրերա» ակադեմիայի տարեկան ցուցահանդեսի առաջին մրցանակին իր «Հայր» գործաֆիկական ստեղծագործության համար:

«Աշխարհ», 27 սեպտեմբերի

ՇՎԵՅՑԱՐԻԱ

Շվեյցարիայի կշտագ քաղաքում լույս է տեսնում «Դի Շտիմմե Արմենիերն» («Հայաստանի ձայն») գերմաներեն լեզվով երկամսյա թերթը: Թերթի հրատարակիչն ու խմբագիրն է պրոֆեսոր Ժ. Գառնուզյանը, որը սկսել է թերթը հրատարակել 1967 թ. հունվարից:

1967 թ. լույս տեսած վեց համարներում տրպագրվել են նյութեր հայ տառերի գյուտի, Մեսրոպ Մաշտոցի, Խաչատուր Աբովյանի, Հովհաննես Ալվազովսկու, հայկական մանրանկարչության ու ճարտարապետության, հայ ժողովրդի պատմության որոշ դրվագների, մեծ եղեռնի, ինչպես նաև Սովետական Հայաստանի մասին: «Դի Շտիմմե Արմենիերն» աշխատակցում են հայ և օտար հեղինակներ:

«Հայրենիքի ձայն» շաբաթաթերթի խմբագրությանն ուղարկած նամակում պրոֆ. Ժ. Գառնուզյանը գրում է. «Բուն նպատակս է գերմանախոս ժողովուրդներուն մեր ազգը, մեր պատմությունը, գրականությունը, մշակույթը ծանոթացնելը»:

Ժ. Գառնուզյանը թերթը հրատարակում է անձնական ծախսով և տարածում է անվճար:

«Հայրենիքի ձայն», 24 հունվարի 1968

Գ Յ Ը

Արևմտյան Գերմանիայում ներկայումս ապրում են 900—1000 հայեր, որոնք ցրված են խոշոր քաղաքներում. Ետտեգարդում՝ 300, Մյունխենում՝ 250, Բեռլինում՝ 100—150, Քյոլնում՝ 200, Համբուրգում՝ 200, Մայնի Ֆրանկֆուրտում՝ 100 մարդ:

«Երևան», 8 սեպտեմբերի

ԱՐԳԵՆՏԻՆԱ

Արգենտինայի Ռոսարիո քաղաքի հայությունը նշել է իր գաղութային միության 15-րդ տարեդարձը:

Տոնական հանդիսությանը մասնակցելու համար Բուենոս-Այրեսից հրավիրվել է «Գայանե», պարախմուքը, որի ղեկավարն է Միդդա Վարդանյանը:

«Հայրենիքի ձայն», 18 հոկտեմբերի

ՈՒՐՈՒԴՎԱՅ

Մոնտեվիդեոյում գործում է «Հայաստան» ակումբը, որը կազմակերպում է հայոց լեզվի դասավանդումներ, հայկական երգ ու պարի ուսուցում: Մարզասեր երիտասարդների համար իրենց փորձերն ու խազերն անցկացնելու հնարավորություն է ստեղծված: Ընթերցասերներն ունեն հայերեն և օտար գրականության հարուստ գրադարան:

Ակումբի վարչությունը կազմակերպել է օրիորդաց բաժնի «Մարո» պարախումբը, «Սա-

յաթ-նովա» նվագախումբը և «Արարատ» էստրադային խումբը:

«Արարատ», 14 սեպտեմբերի

• • •

Մոնտեվիդեոյի «Ռադիո Արմենիան», որի տնօրենն է Հարություն Ռուբենյանը, երեսուներկու տարի է, ինչ կանոնավոր կերպով հաղորդումներ է տալիս հայերեն լեզվով, ուրուգվայահայությանը ծանոթացնելով հայկական մշակույթին, Սովետական Հայաստանի նվաճումներին, հայ գրողների ու կոմպոզիտորների ստեղծագործություններին:

«Հայրենիքի ձայն», 18 հոկտեմբերի

ՋԻԼԻ

Սանտյագոյում կա 120 հոգուց բաղկացած հայկական գաղութ: Գաղութը ունի վարչություն և վարչությանը կից տիկնանց միություն: Այստեղ կազմակերպվում են կիրականօրյա հայերեն դասավանդություններ: Գործում է երգչախումբ: Հայ տունը ունի հյուրանոց և գրադարան:

«Սևան», 13 սեպտեմբերի

ԿԱՆԱԴԱ

Տորոնտոյի հայ գաղութը բաղկացած է 3000 մարդուց: Գաղութն ունի Սահակ — Մեսրոպ ազգային վարժարան, կիրականօրյա դպրոց: Հրատարակում են «Նոր սերունդ» խմբրատիպ ամսաթերթը և «Գանադաի մամուլ» պարբերականը:

Գաղութի հայերից մի խումբ սկսել է «Թորոնթահայ մշակութային միություն», գասախոսություններ, թատերական երևույթներ և այլ միջոցառումներ կազմակերպելու աշխատանքը:

«Զարթոնք», 29 դեկտեմբերի

• • •

Մոնրեալի «Հայ տունը» շաբաթը մեկ անգամ կազմակերպում է հայերեն լեզվով դասընթացներ: Այդ դպրոցը հիմնված է 1952 թ.: Առաջին տարին ունեցել է ութ աշակերտ, իսկ այժմ 96: Մոտ 200 աշակերտ հաճախում է Ս. Հակոբ եկեղեցու կիրականօրյա վարժարանը:

Մոնրեալի հայության թիվը մոտ 12000 է:

«Արարատ», 2 հոկտեմբերի

Ա Մ Ն

Դետրոյտում Համաերգնկացիական վերաշինաց միությունը կազմակերպել է Հայաստանին նվիրված երեկույթ: Հայաստանից ուղարկված յուզաներկ և գրաֆիկ նկարները զարդարել են բեմահարթակը: Ցուցադրվել է Հայաստանի տեսարժան վայրերն ու պատմական հուշարձանները պատկերող կինոնկար:

«Հայրենիքի ձայն», 19 հուլիսի

Դոկտոր Զեյնա էքմեքճյանը Ստրետֆորտ Կը-
նեկտիկի քաղաքի համալսարանի լեզվաբանու-
թյան բաժնի նախագահն է։ Նա կազմել է հայ
գրականության մի ժողովածու, որն ընդգրկում
է XIX և XX դարերի հայ գրողների ստեղծա-
գործությունները։ Յուրաքանչյուր գործից առաջ
տրված է կարճ ծանոթություն հեղինակի կեն-
սագրության մասին։ Գրքի վերջում կա անգլի-
երեն-հայերեն բառարան։

«Հայրենիքի ձայն», 26 հուլիսի

Բոստոնի «Կոմիտաս» երգչախումբը վերջերս
տվել է իր տարեկան համերգը հայտնի երգա-
հան-խմբավար Ռուբեն Գրիգորյանի ղեկավա-
րությամբ։ Համերգն ունեցել է ճոխ և բազմա-
զան ծրագիր։

«Հայրենիքի ձայն», 30 օգոստոսի

Քեմբրիջի հայագիտության ընկերության նա-
խագահ Մանուկ Յանգը Հայաստանում գտնված

ժամանակ SԱՍՍ-ի թղթակցին հայտնել է. «Մեր
ընկերակցության նախաձեռնությամբ, այս վեր-
ջին տարիներուն հայագիտության ամպիոններ-
բացվեցան Հարվարդի, Գոլոմպիայի ու Գալի-
ֆորնիո համալսարաններուն մեջ, ուր դասա-
խոսություններ կը կատարվին հայ ժողովուրդի
պատմության, լեզվի, հնախոսության և այլ
խնդիրներու մասին»։

Այնուհետև Մանուկ Յանգը պատմել է «Հա-
յագիտական ուսմանց և հետազոտություններու
ազգային ընկերակցության» կազմակերպության
նպատակների և գործունեության մասին։

«Լրաբեր», 9 սեպտեմբերի

Սեպտեմբերի 12-ին Մոնտբելլո քաղաքում
հիմք դրվեց հայ նահատակների հուշարձանին
որի կառուցումը իրականացնելու է Պետրոսյան-
Ջաքարյան ընկերությունը։

«Աշխարհ», 11 հոկտեմբերի

Ն. ՎԱՐԴԱՆՅԱՆ-